ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 27 » մարտի 2014 թվականի N/345-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի N 101-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2013թվականի հունվարի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի ներքաղաքային երթուղիների ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին >> N 101-Ա որոշմամբ կազմավորվել է մրցութային հանձնաժողով:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Ս.Պետրոսյանը 2014թվականի հունիսի 17-ի թիվ 02.2/2707 գրությամբ դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին մրցութային հանձնաժողովում մարզպետարանի ներկայացուցչին փոխարինելու համար (գրությունը գրանցված է քաղաքապետարանում 2014թվականի հունիսի 17-ին N 10/5150 թվագրությամբ):

Նկատի ունենալով վերոգրյալը, ինչպես նաև Գյումրի համայնքի ղեկավարի 2014թվականի հունիսի 24-ի <<<<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատանքների համակարգման մասին>> N 1406-Ա որոշումը, ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2013թվականի հունվարի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի ներքաղաքային երթուղիների ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին>> N 101-Ա որոշման մեջ 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) <<Ռուբեն Սանոյան>> բառերը փոխարինել <<Վաղարշակ Մխիթարյան>> բառերով,

2) <<Խաչատուր Խնձրցյան- ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճարտարապետության բաժնի պետ>> բառերը փոխարինել << Համազասպ Մարտիրոսյան- ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության Վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի առաջատար մասնագետ>> բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի քարտուղարի ժ/պ **Հ.Սուլթանյան**

2014թ.Գյումրի